ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 417

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքը (Ագարակաձոր բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Արենի համայնքի (Ագարակաձոր բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքը (Ագարակաձոր բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Վայոց ձոր-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի (Ագարակաձոր բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
10-004-0149-0050 կադաստրային ծածկագրով 0.40049 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարք և 10-004-0150-0015 կադաստրային ծածկագրով 0.01564 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր	10-004-0149-0050 կադաստրային ծածկագրով 0.40049 հա մակերեսով և 10-004-0150-0015 կադաստրային ծածկագրով 0.01564 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Արենի համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (Ագարակաձոր բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի (Ագարակաձոր բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «22» «հոկտեմբերի» 2024 թ.